ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ապրիլի 2020 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՔՐՈՍՍՆԵԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը և հաշվի առնելով «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի մարտի 12-ի և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի մարտի 31-ի №01/11.1/1893-2020 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից Սիրան Հովհաննիսյանին պատկանող 100 տոկոս բաժնեմասից 25 տոկոսը Հայաստանի Հանրապետության քաղաքացի Վարդուհի Կիրակոսյանին և 50 տոկոսը Նիդերլանդների Թագավորության քաղաքացի Կարինե Կիրակոսյանին օտարելուն:
2. «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքների կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել դրանց առնչվող փաստաթղթերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ապրիլի 2020թ.